

Միրուն Գաբրիելյան

Ասկերանի շրջանի Պատարայի միջնակարգ դպրոց, 11-րդ դասարան

3-րդ մրցանակային տեղ



Ինչու՞ են Մարդու իրավունքները կարևոր. իմ ապրած
իրականությունը և Ջապել Եսայանի փորձառությունը
(մրցութային շարադրություն)

<<Երանի տղա լինեի, լինեի չերքեզ, գող, ավազակ,
ապաստանեի լեռներում:

Ես կպայքարեի հանուն արդարության և ուրախությամբ կմեռնեի,,:

Ջ.Եսայան <<Միլիտարի պարտեզներից>>

Ինքս էլ չհասկացա, թե ինչու՞ որպես բնաբան, Ջ.Եսայանի
ինքնակենսագրությունից ընտրեցի հենց այդ տողերը: Բայց, երևի, մինչև ինձ
համակած հուզմունքը հաղթահարեմ, մտքերս համակարգեմ, դա նույնպես կունենա
կունենա իր բացատրությունը:

Այս ստեղծագործությունը ընթերցելուց հետո, առաջին միտքը, որ համակեց ինձ, հետևյալն էր. <<Ո՞վ էս դու, մարդ Աստծո: Մարդակեր գազա՞ն, արարող ու կառուցող հրաշագո՞րծ, թե՞ բարու և չարի անհասկանալի մի խառնուրդ... Ո՞վ էս դու>>: Ես գոնե ինձ համար ուզում եմ պարզել առաջին հայացքից պարզ թվացող մի խնդիր՝ ովքե՞ր են ընդհանրապես գրում իրենց ինքնակենսագրականը և ներկայացնում հանրությանը: Արդյո՞ք միայն տառապանքներ տեսած, Գողգոթայի ճանապարհին անցած մարդիկ, թե նաև հաջողակներն ու երջանիկները:

Զապել Եսայան՝ աղջնակ-օրիորդ-կին-մարտիկ-գոհ, դժոխային ճանապարհով անցած գրողը, ինչպե՞ս է կարողացել այդ անիրավ աշխարհում պահպանել իր տոկուն, խիզախ կեցվածքը: Ինչպե՞ս է կարողացել բարոյականության դասեր տալ քաղաքակիրթ կոչված աշխարհին:

Ինձ հատկապես շատ գրավեցին նրա խոսքերը կնոջ՝ որպես հասարակության լիիրավ անդամի դերի մասին. <<Կինը աշխարհ չէ եկած մինակ հաճելի ըլլալու համար: Կինը եկած է իր խելքը, մտային, բարոյական և ֆիզիկական յատկությունները զարգացնելու համար: Ինքզինքնին յարգող բոլոր կիներուն իտեալը միայն հաճելի ըլլալը պետք չէ ըլլայ, այլ երկրիս վրայ գործոն բարերար տարր մը դառնալը>>:

Ապրելով հայ ժողովրդի երկու հատվածի համար էլ ճակատագրական ժամանակաշրջանում, մանկուց ճաշակելով կյանքի անիրավությունները, տեսնելով ցավագին անարդարություններ՝ նա կարողացել է Մարդ մնալ այդ անմարդկային աշխարհում և իր ապրած կյանքի օրինակով մարդ մնալու դասեր տալ ներկա և գալիք բոլոր սերունդներին:

Գիրքը խորհրդածության տեղիք է տալիս այն առումով, որ Զապել Եսայանի այս ստեղծագործությունը կարծես տեսադաշտ լինի բոլոր ժամանակների համար: Նկարագրելով հայ կնոջ, աղջկա ընդհանրապես հայ մարդու կյանքը սուլթանների, ենիչերների լծի տակ՝ գրողը բողոքի ձայն է բարձրացրել մարդու արժանապատվության ու իրավունքների ոտնահարման դեմ:

Պետք է ասել, որ 9-րդ դասարանի <<Հասարակագիտություն>> առարկան ինձ դուր եկավ հենց առաջին դասաժամից: Մեջբերում եմ <<Իրավունք՝ բարու և արդարության արվեստ, որը շատ անհրաժեշտ է մեզանից յուրաքանչյուրի և մեր հայրենիքի բարգավաճման համար>>:

Ընթերցելով Զապել Եսայանի «Միլիտարի պարտեզները» գիրքը՝ ես մտածեցի Ստամբուլի և Ոսկեղջյուրի հունական թաղամասում ապրող այն մարդկանց մասին, ովքեր ապրեցին չապրելով, ովքեր մանկություն չունեցան:

20-րդ դարասկզբին թուրքական կառավարությունը՝ մարդակուլ ու մարդատյաց, մոռացել էր, թե ով է մարդը և ինչ է նշանակում «մարդու իրավունքներ» հասկացությունը: Չ Եսայանի պատկերավոր մտածողությունը, զգացմունքների առատությունը ընթերցողին տանում են դեպի թուրքահպատակ հայ ժողովրդի կյանքի ուղին, որն, ըստ էության գոյության պարտադրված ճանապարհ էր դեպի Գողգոթա, տառապանք, որի մեջ ոչ իրենց կամքով, ներքաշված էր պատվասեր, աշխարասեր մի ժողովուրդ: Ո՞վ էր իրավունք սվել մարդկանց բաժանել դասերի, դասակարգերի: Տագնապ կա գրողի յուրաքանչյուր խոսքում. «...այն ժամանակներում կանայք առհասարակ տնից դուրս չէին գալիս, իսկ տղամարդիկ ամեն առավոտ աշխատանքի գնալիս կանգնում էին դռան շեմին, խաչակնքվում էին և տնեցիներին հրաժեշտ տալիս, քանզի վստահ չէին, որ երեկոյան կվերադառնան»:

Ոտնահարվում էր հայ մարդու մարդկային արժանապատվությունը:

Ավ.Իսահակյանի խոսքերով՝ օրենքը սրախողխող էր անում թույլին և պաշտպանում ուժեղին: Սակայն այս անմարդկային պայմաններում անգամ Լուսիկ տատը «իր բազմաչարչար կյանքի ընթացքում, երբեք չընկրկելով, պահպանել էր սովորույթներ, անկոտրում հպարտություն»: Ինձ հատկապես շատ դուր եկավ հայ կնոջ «անկոտրում հպարտությունը»: Գուցե նրա համար, որ բոլոր դարերում, բազմաթիվ ու բազմանուն ոսոխների տիրապետության ճիրաններում հայ կինը կարողացել է պայքարել, մաքառել հանուն արդարության, հանուն մաքուր ու անարար պատվի:

Աստված իմ, ու՞ր էր աշխարհի խիղճն ու ամոթը, անգամ «անպարկեշտ Պայծառը» բոլոր առումներով բարձր էր ու վեհ բոլոր սուլթաններից, ամիրաներից ու արքեպիսկոպոսներից: Ինչքան խորիմաստ էր տատիկի արտահայտած միտքը. «Որ կողմն էլ շրջվեին, չէին կարող սպասովել»:

Ես նորից պիտի դառնամ ու ցավով ասեմ, որ անմարդկային պայմաններում ապրող, բոլոր իրավունքներից զրկված մարդիկ երբեմն թուլանում էին, խոնարհվում ու ծնկաչոք ներողություն խնդրում, իրենց ողջ ունեցվածքը դնում պատրիարքի ոտքերի տակ, որպեսզի բանադրանքը վերանա և կրկին «կենդանի մարդ դառնան»:

Տատի պատմաճով, ոմանք էլ ուրանում էին իրենց հավատը և իսլամ ընդունում: Ո՞վ էր պատասխան տալու այսքան խեղված մարդկային ճակատագրերի համար: Կարծես լսում եմ մեծն Գրիգոր Զոհրապի մեղադրանքը ուղղված Աբդուլ Համիդին. «Օր մը պատասխան ես տալու...»: Եվ տվեցին պատասխանը: Այդ պատասխանը հայ վրիժառուների սրի ծայրով դուրս քաշվեց:

Զապել Եսայանը՝ կյանքի դաժան բովով անցած, բայց կյանքի դեմ չչարացած գրողի իդեալը, ազատ, ներդաշնակ մարդ էր: Մենք այս գրվածքով հանդիպում ենք լուսավոր մարդկանց, ովքեր ցանկացած պարագայում չկորցրեցին մարդկային արժանապատվությունը, մարդկային դեմքը:

Զ. Եսայանը դատապարտում է անմարդկայնությունը և նրա մանուկ հոգին ըմբոստանում է այն բարբարոսությունների դեմ, որի վկան էր ինքը: «Այդ մարդը դեռ շարունակում էր ողբալ իր ցրված գործիքների և ընկած վառարանի մոտ: Այդ տեսարանը դարձել էր Անի քաղաքի պատկերը, որը նստած լալիս էր,,: Եվ տատիկի բացատրությունը. «Յավրու՛մ, ինչու՞ ես այդքան մտահոգվում: Նա՛՛ հրեա՛ է, հրեա՛»:

Հետագայում այդ առթիվ նա հիշում է հոր՝ իր համար շատ կարևոր կարծիքը.

– Աղջի՛կս, չկա վատ ժողովուրդ, կան լավ մարդիկ և կան վատ մարդիկ:

– Իսկ թուրքե՞րը,

– Թուրքերք նույնպես:

Հնարավոր է արդյո՞ք ամբողջացնել 20-րդ դարասկզբի արևմտահայ կին գրողի քաղաքացիական, ազգային, մարդկային նկարագիրը՝ որպես սկզբունքային, տոկուն, կարելի է ասել հերոսական:

Ընթերցողի աչքի առջև է Սկյութար-Միլիհտար թաղամասում ապրող մարդկանց ողբերգական կյանքի պատմությունը՝ իր ուրույն կյանք ու կենցաղով, վարք ու բարքով, հոգեկան ու բարոյական աշխարհով: Կախարդականորոն գունեղ, տեսանելի ու շոշափելի են Շիրինի ու Ֆերհաթի կերպարները. «Նրանք ուրիշ մարդիկ էին, ճիշտ է կարող էին շատ խմել, բայց ուժեղ բնավորություն ունեին: Նրանք պաշտպանում էին իրենց իրավունքները, երբեք ուրիշների իրավունքները չէին խախտում, ընդհակառակը՝ պաշտպանում էին: Ոչ, նրանք փող չունեին, բայց ունեին մեծ սիրտ: Նրանք արդարամիտ էին»»: Ապրելով այսպիսի միջավայրում, ուր «որ կողմն էլ շրջվեին, չէին կարող ազատվել», տեսնելով կյանքի հատակը,

անարդարություններ, բռնություն, ունենալով կյանքի զարմանալի աշխարհագրություն, ըմբոստ կինը կարողացավ իր հոգեցունց ստեղծագործություններով պայքարի դրոշ պարզել անարդարության դեմ:

<<Ազատությունը մարդու անօտարելի իրավունքն է>>,- սովորեցնում են մեզ ու հետո փորձում խլել այդ ազատությունը: Այս հավերժական պայքարում հաղթում է ուժեղագույնը: Սկյութար-Փարիզ-Կոստանդնուպոլիս- Կիլիկիա-Բուլղարիա-Թիֆլիս-Հայաստան-Սիբիր-Ռուսաստան՝ ողբերգական աշխարհագրություն, որի միջով անցնելով Ջ.Եսայան անհատը չի վարանել սուր ճոճել Սուլթան-Աբդուլ Համիդի մարդակեր իշխանության դեմ: Նա եղել է կնոջ և ընդհանրապես մարդու իրավունքների պաշտպան: Ես չգիտեմ իրավասու եմ արդյոք, զուգահեռ անցկացնել գրողի ապրած ժամանակաշրջանի և իմ ապրած ժամանակաշրջանի միջև: Ի՞նչ է փոխվել այդ ժամանակներից: 20-րդ դարասկիզբ և 21-րդ դարի սկիզբ: Շատ բան է փոխվել, իհարկե: Մենք ունենք ազատ ու անկախ երկիր Նաիրի, մեր ազատատենչ գրողների ազատ հայրենիքը: Ես գիտեմ, որ <<ազատություն>> բառը շատ թանկ արժե, այն ավելի շուտ անգին է, որովհետև այն ձեռք է բերվել հազարավոր մատաղ կյանքերի գնով:

Ես իսկապես իրավունքներ ունեմ կյանքի ամեն պարագայի համար, ունեմ նաև պարտավորություններ: Ունեմ աչքեր և, ցավոք, տեսնում եմ անարդարություններ, մարդկային տարրական իրավունքների, արժանապատվության ոտնահարում: Ես չեմ ուզում գրել այսպիսի խոսքեր, ես աշակերտ եմ, բայց այնպես եմ ուզում լինել <<չերքեզ>> և պայքարել հանուն լիիրավ արդարության: Ես ուզում եմ, որ մեր Սահմանադրության այնքան մարդասիրական օրենքները թղթի վրա չմնան, այլ դառնան պարզապես կենսակերպ: Ես ուզում եմ մեր շրջապատում մի կերպ յուր գնացող թոշակառուներ չլինեն, որդեկորույս ծնողները դռնից դուռ չգնան արդարություն որոնելու...

Ես այնքան շատ բան եմ ուզում, որ չեմ կարողանում ցաքուցրիվ մտքերս համակարգել ու ասել. <<Հպարտ եմ, որ Ռոբերտ Աբաջյանի, Ադամի, Արմենակ Ուրֆանյանի, Քյարամի ժամանակակիցն ու ընկերն եմ, նրանց կյանքի հետագծով քայլողը>>: Նրանք ժամանակ չունեցան մտածելու, թե ո՞վ էր արդարն ու անարդարը,

ն՞վ է պետք է պաշտպաներ իրենց իրավունքները: Նրանք դարձան հավերժի ճամփորդները՝ մեզ պատգամ թողնելով սիրել հայրենիքը, տեր կագնել մեր երկրին, ուսանել այս դժվարին դարում Մարդ մնալու օրենքները և մեկ-մեկ այցի գնալ ծնողներին:

Զ.Եսայանի <<Կյանքի փորձառությունը>> դաստիարակչական մեծ նշանակություն ունի: Այն ինձ ստիպեց մի ուրիշ լույսի տակ հասկանալ մարդու իրավունքների կարևորությունը և ճանաչել ու գնահատել իմ ապրած ժամանակաշրջանը: